

որ պետական ուսումնարանների թիւը քիչ է եղել, բայց այժմ դարձել է անկեղծանոց, չորհրդակա սեղան հայ հասարակութեան, որն անտարբեր և սառն աչքով է նայում և որը աշխատում է փոխանակ առաջ տանելու, բարեկարգելու, աւելի յետադիմութեան հասցնել և մինչև անգամ անյայտացնել այդ ուսումնարանը, Գործնական մի քանիսները ասում են թէ ուսումնարանը գործունեայ հոգաբարձուներ չունի, լաւ ուսուցիչներ չը կան, պէտք է լաւ հոգաբարձուներ ընտրել, պէտք է լաւ ուսուցիչներ հրաւիրել և այլն, բայց սրանք լոկ խօսքեր են։ Իսկ միւսները ասում են թէ աւելորդ է այդ ուսումնարանը, ոչինչ չեն սովորեցնում, ի գուր է այդտեղ փող մտնելու... Այսպէս կը խօսեն քանի որ ուրիշ խօսելու նիւթ չունեն և կը լռեն։

Այս երկու տարի է ուսումնարանի վերաբերութեամբ վեճ կայ։ Հասարակութիւնը բաժանված է երկու կուսակցութեան, որոնցից իւրաքանչիւրը իր կողմից հոգաբարձուներ է ընտրում և ուղարկում հաստատութեան համար, բայց ոչ մէկի հաստատութիւնը չէ գալիս, միայն հրամայած է հոգևոր կառավարութեանը հսկել ուսումնարանի վրա։ Ի հարկէ այստեղ էլ էջմիածինը իր հաշիւները կուսենայ։ Այժմ ուսումնարանի անտեսական մասը յանձնված է հոգևոր կառավարութեան անդամ Ներսէս քահանային։ Այստեղ քանի որ պետական օրինորդական ուսումնարան չը կար, հայոց ուսումնարանում աշակերտութեան թիւը երեք անգամ շատ էր աշակերտներից, բայց այժմ սեպտեմբերից բացվում է օրինորդական պրոգիմնալիս և հայոց ուսումնարանում կամ չեն լինի օրինորդներ և կամ եթէ լինեն, այն էլ թեով քիչ։ Հայոց ուսումնարանը չունի և լաւ ուսուցիչներ, կարծես թէ մեր ուսումնարանը բազմ չունի։ Թէպէտ երբեմն գալիս են լաւ ուսուցիչներ հայոց լեզուի, բայց տարաբարդաբար նրանք մէկ կամ երկու տարուց աւելի չեն մնում, և հոգաբարձուները մի անտեղի պատճառ գտնելով արձակում են նրանց։ Խնդրե՛ք ասե՛ք, այն ուսումնարանում, որտեղ ուսուցիչները շուտ շուտ են փոխվում, ինչ յաւաքովի մտնելիս կը լինի։ Կեռ ուսուցիչը հազիւ թէ ծանօթանալով աշակերտների հետ, յանկարծ փոխվում է։ Կարծես թէ դիտմամբ են անում գործընկերը այս, որպէս զի հայոց լեզուն առաջ չը գնայ, որովհետև շատ են ասում այդ լեզուն, իսկ միւս առարկաների ուսուցիչները տարիներով են մնում։ Առսաց լեզուի ուսուցչուհիներ, որը տաս տարի է ուսուցչութիւն է անում և որը այս տաս տարվայ մէջ ոչ մի յառաջդիմութիւն չէ ցոյց տուել, սրան չեն կարողանում փոխել, որովհետև ուսուցչուհիներ շատ բարեկամ են ունի այստեղ, որոնք պահում են սրան իր պաշտօնի մէջ։

Չարմանալի ժողովուրդ են գործընկերը։ Բաւական չէ որ իրանք զրկված են իրանց մայրենի լեզուից և խօսում են օտար (փրանգերէն) լեզուով, աշխատում են, որ իրանց որդիքն էլ զրկվեն այդ լեզուից։ Սրանք աւելորդ են համարում այդ լեզուն։ Եթէ հայ գործընկերը հարցնէք թէ դու ազգով ինչ ես, կը պատասխանի թէ հայ եմ, իսկ եթէ ասես թէ գիտես քո մայրենի լեզուն, կը պատասխանի, «է՛հ բան չունիս, ինչ հարկաւոր է հայերէն լեզուն, որտեղ է ընդունված»։ Ահա այս կարծիքն են սրանք իրանց մայրենի լեզուի վրա։ Ամօթ և հազար ամօթ գործընկերին։ Ես չեմ կարող ասել թէ գործընկերը ինչու են իրանց որդոց օտար ուսումնարանում տալիս. պէտք է տալ, բայց իր ժամանակին, այսինքն երբ կրթված կը լինեն իրանց մայրենի լեզուով։ Բայց այս բանը չեն հասկանում. գոնէ պէտք է հասկանան։ Ո՞վ պէտք է հասկանան, եթէ ոչ հոգևոր հայրերը, բայց սրանցից էլ անբաղդ ենք մենք՝ գործընկերը։ Մեր քահանաների մեծ մասը ազգեւ են, ուսումից գուրկ են։ Եկեղեցում չէք լսի ոչ կրօնի և ոչ ազգի վերաբերութեամբ քարոզներ, միայն կը լսեք հարուստ ննջեցեալների վրա ձուռեր, որպէս զի տէրերը աւելի փող տան իրանց։ Այնպիսի հարուստ ննջեցեալներին գովում են, որոնք գովելու արժանի չեն։

Գործնական մի քանիսները չեն վախճանում քորեցիներին։ Վարդապետները չեն անհաշիւ գործընկերներին և հոգևոր իշխանութիւնը ուժ որ նշանակում է,—չէ գալիս։ Մտքի ժամանակում էջմիածինը նշանակել է այս տեղ մի վարդապետ, բայց նա մերժել է էջմիածնի խօսքը ասելով «Փարսջէս և վեղարս սե են և երեսու էլ չեմ սե-

լացնի գործընկերի մէջ, աւելի լաւ եմ համարում մա՛ն անապատի մէջ, քան կեանքը գործընկերին հետ»։ Այսպէս հոգևոր կառավարութիւնը միացել է անտեր, և կառավարվում է երկու անդամներով։

Սեպտեմբերից հայոց ուսումնարանը Ս. Աստուածածնայ եկեղեցու գաւթից տեղափոխվում է իր սեփական շինութեան մէջ, որ գտնվում է քաղաքային ուսումնարանին կից։ Ճշմարիտն ասած շատ յարմար շինութիւն է ուսումնարանի համար, բայց եթէ այստեղ տեղափոխվեց, դժվար թէ կառավարվի, որովհետև այն ժամանակ ուսումնարանը կը զրկվի տարեկան 600 ռ. որ մինչև այժմ կը չը բերում այս շինութիւնը, և այդ ժամանակ էլ չազիւ էր կառավարվում, այժմ ինչպէս կը կառավարվի։ Բայց երկուսն ուսումնարանից, այնտեղ տեղափոխվում է և հոգևոր կառավարութիւնը, որտեղ պէտք է լինի և յաջողարանը։ Եթէ իրաւ հոգևոր կառավարութիւնն ու յաջողարանը տեղափոխվեց այստեղ, այն ժամանակ ուսումնարանին էլ ոչինչ տեղ չի մնայ։

Գործիցի

ՆԱՄԱԿ ԽՈՐԱԳՐԻՆ

Թիֆլիս, 25 յուլիսի

Կը խնդրեմ ինտարհարար ձեր յարգութիւնից որ տեղի տաք այս իմ նամակին ձեր պատուական օրագրի մէջ ի պատասխանի ամսոյ 13-ին «Մշակի» 134 համարում տպած նամակին։

Գիտե՛մ, մի որ ի իցե պարոն իբր իմ հարսանեաց հանդիսականներից, անձնական կրթից ըստիպված չօչափել է իմ տանու ծխատեղ Մոզնու եկեղեցու Արիստակէս աւագ քահանայի պատիւը, և ինչից ստիպված այդքան զրաւաճութիւններ իր խօսակցութեան առարկայ է շինել և ձեր պատուական օրագրի նիւթ։ Ինչքան այժմ Չինաստանում պատահած անցքերը անգիտելի են ինձ, այնքան են անտեղի և գուր է մի ոմն հանդիսականի ձեզ գրած նամակը Տէր Արիստակէսի մասին։

Տէր Արիստակէս հայրը է իմ տանու քահանայ, որին ես մի յարկ օր առաջ խնդրել էի, թէ ամսոյ 5-ին պէտք է ինձ պահել, և նա կիրակի օրը պայմանադրեցելով ժամանակին եկաւ և կատարեց իր պարտքը։ Նա ոչ ոքից ոչ երկիւղ ունէր և ոչ քաշվելու բան։ Ճշմարիտն եմ ասում, որ այն նամակը, որի մէջ զրպարտութիւններ են պարունակվում, բոլորովին գուր է, որովհետև երբ ձեր գազէթը ինձ մօտ կարդային, բոլորովին զարմացայ, և ասացի թէ այդքան էլ սուտ բան կը գրեն մի կենդանի մարդու վրա։

Տէր Արիստակէս հօրը թող չը զգուշացնէ այն ստապատիր յօդուած գրողը, իրան զգուշացնէ, որ միւս անգամ իրաւունք չը տայ իր լեզուին և գրչին զուրս գալու այդպէս անիրաւ կերպով զրաւոր հանդէս և խաբել պարզամտներին։

Գործը վերաբերում է Վիզնթի տէր Սարգիս քահանային, որին ես առանձին տոմար կով չէի հրատարած. սխալ է այդ, այլ գուցէ կողմնակի կերպով հրատարակված լինէր, ես ինչ կարեորութիւն ունէի նրան սպասելու և նրանից նեղանալու, քանի որ ես իմ քահանային իրան ժամանակին իմ տանն պատրաստ գտայ և որն էլ ինձ պահեց։ Ահա այս նամակը գրում եմ ի միամտութիւն ձեր պատուական թիւթի վարդապետներին, որ տէր Արիստակէս աւագ քահանայ իր օգտի համար չէ խաբել և տէր Սարգիսին, ինչպէս ասում է նամակ գրողը, որովհետև ես էի տէր Արիստակէսին արդիւնք տուողը և ոչ թէ տէր Սարգիսը, այս վերջինին ևս պատրաստ էի շահել իբրև քահանայ, եթէ իր ժամանակին կը գտնուէր։

Ճշմարիտն եմ ասում, երանի կը լինէր մեզ, եթէ մեր բոլոր հոգևորականները այնպէս լինէին իրանց պատիւը ճանաչող և բարոյական ինչպէս տէր Արիստակէսը. յուսով եմ, որ այս խօսքիս համար կը վկայեն նրան ճանաչողները, և նոյն իսկ հոգևոր իշխանութիւնը։

Ես թողնում եմ նրա լաւ յատկութիւնների գովելը արժանաւոր գրչի, այն է, նրա արած ծառայութիւնները եկեղեցուն, թող այսքանով բաւական լինի պարոն հանդիսականը, թող չափը ճանաչէ և չը յարձակվի անտեղի կերպով այն անձի դէմ, որը յայտնի է թիֆլիսի հասարակութեան։

Թէև չարժէր նրան պատասխան տալը, բայց գուցէ լուսթիւնը տեղի տար կարգացողներին հաւատարու այն սխալ և գուր լուրին։

Յուսով եմ, որ դուք այս իմ նամակս կը տպէք ձեր գազէթի մէջ։

Եւզոօր Նաւտիկեանց

ՆԱՄԱԿ ԽՈՐԱԳՐԻՆ

Բագու, յուլիսի 20

Ամսոյ 20-ին տեղիս հաշտարար դատարանում քննվեց շատ հետաքրքիր և չեղած գործ։

Գործն այս է. դեկտեմբեր ամսին տեսուչ Բագուի Մարգասիրական ընկերութեան ուսումնարանի բժիշկ Արամեանց հրաւիրեց Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» խմբագիր պ. Սիմէօնեանցի միջնորդութեամբ օրիորդ Մարիամ Վարձեյանին վարժուհու պաշտօնը վաւելու օրիորդաց ուսումնարանում. այս պայմանով օրիորդ Վարձեյանը պէտք է ստանայ Թիֆլիսում 100 ռուբլ ճանապարհի ծախս, իսկ ուսձիկ 400 ռուբլին 50 ռ. ամսական յունվարի մէկից մինչև սեպտեմբերի մէկը։ Օրիորդ Վարձեյանց ստացաւ Թիֆլիսում պ. Սիմէօնեանցից 100 ռուբլ ճանապարհի համար և այստեղ ուսձիկ մինչև յունիսի մէկը 250 ռուբլ։ Մայիսի ուսձիկը տալու ժամանակ պ. Արամեանցը ասում է օրիորդին, որ յունիս ամսի մէկից նա իր վերոյշնաւ պայմանը վերջացնում է։ Այս պատճառով օրիորդը տալիս է խնդիր Մարգասիրական ընկերութեան խորհրդին հարցնելով թէ ինչ պատճառով Արամեանցը զրկոււ է նրան ամառվայ երեք ամսվայ 150 ռուբլուց։ Այս խնդրի պատասխանը օրիորդ Վարձեյանը ստանում է 26-ին յունիսի ընկերութեան նախագահից։ Այս նամակով Մարգասիրական ընկերութեան խորհուրդը մերժում է օրիորդին 150 ռուբլ։ Օրիորդ Վարձեյանն մնալով տարակուսեալ դիմում է տեղիս հաշտարար դատարանին որ գոնեա այս ճանապարհով ստանայ իր փողը։ Ինչպէս վերև յիշեցի այս ամսի 10-ին քննութիւն եղաւ։ Ընկերութեան կողմից պաշտպան նշանակված էր տեսուչ պ. Արամեանց, իսկ օրիորդի կողմից իր եղբայր Արաիկ Վարձեյանցը։ Վերջապէս դատարանը վճռեց պահանջել ընկերութիւնից յօգուտ օր. Վարձեյանցի 150 ռ. և դատաստանական ծախս (судебныя издержки) 10 ռ.։ Այս վճիռն Արամեանց չը յօժարվեցաւ և կամեցաւ դիմել գաւառական դատարանը։

Վերջացնելով նամակս չեմ կարող իմ ցաւս չը յայտնել նախ՝ Մարգասիրական ընկերութեան մասին, որ իր ծառայողներին այն աստիճան է հասցնում, որ նրանք դիմում են դատաստանը. երկրորդ՝ պ. Արամեանցի մասին որ ինչպէս ուսեալ մարդ, մանկամարտ, այսպէս անարդար կերպով վարվում է մի օրիորդի հետ, և երրորդ՝ պ. Սիմէօնեանցի մասին, որ լաւ գիտենալով Բագուի Մարգասիրական ընկերութեան ինչ վիճակը, ճանաչելով նախագահին և անդամներին, խորհուրդ է տուել օրիորդ Վարձեյանին թողնել Թիֆլիս և գնալ Բագու, ինչպէս գառը պայլերի մէջ մտնելու համար։ Ընկերութեան այս գործերը լաւ ընթացքին չեն հասցնի նրան. ճառ տարուց աւելի է ինչ որ ընկերութիւնը ուսումնարան ունի,— և ինչ գրութեան մէջն է նա. ունի մինչև հարիւր աշակերտ և վաթսուներկ չափ աշակերտուհիք։ Ուսումը հասնում է պետական դպրոցների առաջին դաստան պրօգրամային, չը նայելով որ այսքան տարի է ուսումնարանը շինվել է և ընկերութեան մայր-գումարը հասնում է մինչև 50,000 ռուբլու։ Ընկերութիւնը առաջին անգամ չէ որ այդպէս է վարվում ուսուցիչների հետ. նա կարծես մէկ պատճառ է որոնում ուսուցիչների դէմ, որպէս զի մին միւսի հոտից հեռացնէ նրանց։ Միայն թէ դեռ ոչ որ քաջութիւն չէ ունեցել բողոքել հաշտարար դատարանը։

Հարկաւոր եմ համարում աւելացնել, որ ինչպէս լաւ ծանօթ օր. Վարձեյանցի հետ, օրիորդը ինձ ասել է որ մտադրել է, փողը ստանալուց յետոյ, դատաստանական ծախսը ինչ որ կը հասնի նրան, նուիրել ձեր խմբագրութեան միջնորդութեամբ Վանի սովեալներին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արժրիային եղանակները շարունակվում են Թիֆլիսում և նրա շրջակայքում։

«ՆОВОСТИ» լրագիրը լսել է որ կովկասեան փոխարքայութիւնը դառնալու է գեներալ-հասնապետութիւն։

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ «ГОЛОСЪ» լրագիրը վեց ամսով դադարեցաւ։ Յայտնի է որ «ԳՕՐՈՆ» լրագիրը ուսուցա թերթերից ամենաառաջնավայթ թերթն է և մեծ հուշակ ունի և օտար երկիրներում։ Նա ուսուց մեծ թերթերից միակն է որ հասել է 25,000 բա. ժաննորդների թւին։ «ԳՕՐՈՆ» վեց ամսով դադարել է մեծ նիւթական փեսա կը տայ նրա խմբագրութեանը։

ՆՈՒԹՈՒՑ մեզ գրում են։ «Հայոց ուսումնարանի հոգաբարձութիւնը կամնում է երկու ուսուցիչ հրաւիրել, իւրաքանչիւրը 600 ռուբլ ուսձիկով, այն ինչ ուսումնարանի ամսոյ լի կամուտը տարեկան 700 ռուբլ է։ Խորհուրդ կը տանք հոգաբարձութեանը նախ ապահովացնել զպրտը և յետոյ հրաւիրել վարժապետներին։ Եթէ ոչ նոր հրաւիրվածներին էլ մի քանի ամիս չանցած, փողի պակասութեան պատճառով և տեր Սիմէօնի խորհրդով, կարծական, ինչպէս արդէն արել են նախկին ուսուցիչներից շատերի հետ»։

Այս ուրբաթ օր, յուլիսի 31-ին լինելու է Արժրուհու թատրոնում հայ թատրոնականների ներկայացում։ Պրօգրամը շատ լաւ է կազմված և համապատասխան է բոլորովին ամառվայ ներկայացմանը։ Կը խաղան «Ժամտև և ժամեւտ» օպերէտ-վոդյուի 1 արուարածով, թարգ. Գ. Շահրուզադեանի, որին կը մասնակցեն տիկին Գաչայան-Տէր-Վրդգորեան, պ. պ. Սուքիասեան և Միրազեան, նոյնպէս «Երեք ապականեր» վոդյուի 1 արարուածով, թարգմ. Յ. Տէր-Վրդգորեանի, որի մէջ կը մասնակցեն տիկին Գաչայան-Տէր-Վրդգորեան, պ. պ. Սարգսեան, Տէր-Վրդգորեան, Վարձեյան և Միրազեան։ Վերջապէս կը լինի և Զաւէտ, բաղկացած երեք նօմէրներից. տիկին Գաչայան-Տէր-Վրդգորեան կը կատարէ «Կիւրական փոստատար» պատկերը երգեցողութեամբ, պ. Տէր-Վրդգորեան կը պատմէ «Պատկերներ ժողովրդական կեանքից» և պ. Սուքիասեան կերպէ։ Ներկայացման սկիզբը 8½ ժամին է։ Տեղերի գները սովորական են և սովորական կարելի է ստանալ Արժրուհու թատրոնի կասսայում։

Քիվվար գիւղի դպրոցի հոգաբարձու պ. Մ. Յովհաննիսեան պատասխանելով «Մշակի» № 98 մէջ տպված Ղուբայի ստացած նամակին, ասում է որ Քիվվարի դպրոցը ստանում է «Մարդասիրական» ընկերութեանից ոչ թէ 350 ռուբլ տարեկան, այլ միայն 300 ռուբլ։ Պարոնը հետեւելով հայելու անուամբ Բագուի Մարգաս. ընկերութեանից 300 ռ., Արղանդուլեանց քահանայից 1 ռ. և 1879 թից մնացած 195 ռ. 71 կւպ. գումարի հետ կանի 496 ռուբլ 71 կոպէկ գումարը, որից հանելով ծախս մի ուսուցիչ տարեկան վարձ 180 ռ., գրքեր և մանր ծախսեր դպրոցի վրա 30 ռ. 30 կ., ընդամենը 210 ռ. 30 կ., մնում է 1881 թ. 30 կ., ընդամենը 286 ռ. 41 կ., որ պահվում է նոյն պ. Յովհաննիսեանի մօտ։ Պ. հոգաբարձուն հաստատեցնում է որ ուսման կողմից էլ դպրոցը լաւ է գնում։

ԱԽԱԼՑԻԱՅԻՑ մեզ գրում են։ «Յուլիսի 23-ին տեղիս հայոց ժողովուրդը ներկայացրեց մի համառօտ և ազդեալ խնդիր առաջնորդական փոխանորդ գերապատիւ Գրիգոր արքեպիսկոպոս Սահակեանին, որով պահանջում է երեք եկեղեցիներ, այն է Ս. Ստեփաննոս, Ս. Աստուգործի և Ս. Փրկչի մայր-եկեղեցու հայտնելը։ Երբ երեք փոխան պ. Յովհաննիսեան վանքանցից ժողովուրդը պահանջեց մատենաներ, յարգելի պարոնը զը պահանջեց մատենաներ, յարգելի պարոնը փոխանակ ներկայացնելու ճիշտ ծառայողները մատենաներ, ներկայացրեց հատ ու կտոր մանր մուսնր և խառն ի խառն թղթերի կտորներ, իսկ բոնց վրա արած էր իր նկատողութիւնները. իսկ քապաւինեալ մատենաները հետք էլ չը կար ծառայողները մատենաները հետք էլ չը կար 1879, 1880 և 1881 թւերի ընթացքում, որի զօ-համար կազմվեցաւ արձանագրութիւն, որի զօ-

բուժանքը կը բերեցան նախ եկեղեցական կասան և ապա երեցփոխանական սենեակը, Հասարակութիւնը դիտարկութիւն ունի մի ինչորք ներկայացնել վիճակային կօնսիտօրիային, որով պէտք է պահանջեալ նախ կարգել նոր հաշուառններ, որովհետեւ հին հաշուառնները յարկարարնի մէջ ժողովրդի առջև և յարկի ներկայութեամբ յայտնեցին որ տարէն 400-ական ռուբլէին ստացել երեցփոխանից, երկրորդ՝ քննել և զննել ներկայացրած թղթերի կտորները, երրորդ՝ տեսնել ինչ տարվայ երեցփոխանական հաշիւը, փառք Աստուծու որ մեր ախարհայեցողները սկսել են վերջապէս հասկանալ իրանց իրաւունքը և պաշտպանել իրանց շահերը: Բայց արդէն կազմվել է մի կուսակցութիւն Վանքայեցի պաշտպանելու համար:

Այսօր լինելու է աճուրդ կապալով տալու համար Գամայեանց եկեղեցու մօտ, եկեղեցական հողի վրա շինած սենեակը: Այդ սենեակ պատուութիւնը այս է: Տասն երկու տարի առաջ պ. Շարբուով Մակար եպիսկոպոսի համաձայնութեամբ յանձն առաւ շինել այդ սենեակը և 12 տարի շարունակ ինքն չանվում էր ստանալով 3,000—4,000 ռուբլ տարեկան, իսկ եկեղեցուն վճարում էր 70 ռուբլ տարեկան կապալադրամ: Այժմ նա կրկին աշխատում է կապալով վեր առնել այդ սենեակը, բայց այս անգամ 60 տարով, առաջարկելով եկեղեցուն վճարել տարեկան կապալադրամ 600 ռուբլ: Թիֆլիսի հայոց կօնսիտօրիային Շարբուովի կողմէն է բռնում, երկր մի որ և է շահն ունելով այդ գործից: Յոյս ունենք որ ծիսականները այսօր հաւաքվելով առաջնորդարան, կը խանգարեն Շարբուովի գիտաւորութիւնները: Արդէն այս օրերս մէկ ժողով է եղել այդ հարցի մասին և ծիսականներից գրեթէ ոչ ոք չը կար, բացի պ. Շարբուովի կուսակիցներից: Լաւ բան է՝ ստանալ 4,000 ռուբլ տարեկան և վճարել 600 ռուբլ միայն: Մեր հոգևոր իշխանութեան ներկայացուցիչները հոգում են ոչ թէ եկեղեցու օգուտների մասին, բայց իրանց անձնական շահերի մասին: Երեք Մամբրէն հետեւում է Մակար եպիսկոպոսի շահին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԿԻՒԱ

Անգլիական համայնքների ժողովը վերջացրեց չափազանց խճճրճված և դժուար գործ. իրանդական կայսրական օրէնքը արդէն քննված է մանրամասնաբար Վրացստանի անմիջական առաջնորդութեամբ:

Երբ քննվեցան և մերժվեցան յօդուածների վերջին խմբագրութիւնները, ժողովի մէջ մեծ ծափահարութիւններ տեղացին 'ի պատիւ Վրացստանի, որ այդ ժամանակ իր տեղից վեր էր կացել: Առաջին մինիստրի յայտնութիւնը հերթական պարագմունքների վերջանալու և ժողովի նիստերի փակվելու մասին նոր ծափահարութիւններով ընդունվեցան:

Շատ քիչ է պատահել, որ մի որ և է ազգային ժողով այդքան աշողութեամբ և բարեխղճաբար աշխատէր, ինչպէս անգլիական համայնքների այժմեան ժողովը: Աւելի էլ քիչ է պատահել որ և է ժողովին գործ ունենալ այդպիսի ընդարձակ և նշանաւոր սօցիալական վերանորոգութեան հետ, ինչպէս Վրացստանի կայսրական օրէնքն է: Ժողովը ստիպված էր քննել Նրլանդիայի կայսրական գրութեան բոլոր մանրամասները, պէտք է լսէր հետաքրքրված անձանց և մասնագետների ընդարձակ ձայները, պէտք է տանէր իրանդական անհաշտ պատգամաւորների թշնամական յարձակումները և ուշադրութիւն չը դարձնէր ընդդիմադրականների դրած արգելքների վրա: Համայնքների ժողովը աշողութեամբ լուծեց այն խնդիրը, որ շատերը անլուծելի էին համարում մի քանի հարիւր անդամներից բաղկացած ժողովի համար: Վրացստանի օրէնսդրական նախագիծը

մշակված է, բազմակողմանի քննութեան է ենթարկված, ուղղված և լրացրած է ժողովից ամենակատարեալ կերպով: Օրինագծի մէջ ոչ մի խօսք չէ մնացել, որ կշռված չը լինէր պարլամենտից հասարակական կարծիքի և ազատ մամուլի անմիջական հսկողութեան տակ:

Այդ պատճառով համայնքների ժողովը իրաւունք ունէր յայտնել իր բաւականութիւնը գործի աշողութեամբ վերջացնելու առիթով: Մաքահարկով աշխատատէր մի նիստը Վրացստանին, ժողովը մի և նոյն ժամանակ գնահատեց և իր աշխատանքները: Անգլիական պարլամենտի կատարած գործը մանաւանդ նշանաւոր է և այն պատճառով, որ կայսրական նոր օրինագիծը շօշափում էր կայսրական տէրերի շահերը, որոնք ազգեցութիւն ունեն թէ համայնքների ժողովի և թէ երկրի մէջ: Հարկաւոր էր անձնագոհութիւն տիրապետող անասական նախապաշարմունքներից հրաժարվելու և օրէնսդրութեան մէջ այնպիսի մի նոր կենսական սկզբունք մտցնելու համար, որ կարող էր ազդել Անգլիայի հասարակական ապագայ կազմակերպութեան վրա: Տիրանիայի գործիչներից շատերը պախարակում էին մի ժամանակ Վրացստանի օրինագիծը, նրան վտանգաւոր համարելով կայսրական սեփականութեան սուրբ իրաւունքների համար: «Journal des Débats» լրագիրը ինքնահասանելիութեամբ գոյություն ունի Անգլիային Վրացստանի ընտրած «փտանգետ» ճանապարհի դէմ: Լրագիրը իր անմշակ յօդուածներով ապացուցեց, որ նա բոլորովին ծանօթ չէ Նրլանդիայի կայսրական և երկրագործական իսկական գրութեան հետ: Նոյնպիսի թիվն ամսուրնութեամբ վերաբերվեցաւ Նրլանդիայի կայսրական վերանորոգութեանը «République Française» լրագիրը, որ իրան հմուտ է համարում սօցիալական և անտեսական գիտութիւնների մէջ: Այս լրագիրը մինչև անգամ մանրամասն քննութեան չենթարկեց Վրացստանի օրինագիծը, այլ բաւականացաւ ընդհանուր և կարճաօտ գատողութիւններով, որոնք թերահաւատութեամբ և կասկածանքով էին վերաբերվում այդ «համարձակ» օրինագծին: Այս կողմից անգլիական մամուլը աւելի հմուտ յայտնվեցաւ սօցիալական գիտութեան մէջ:

Համայնքների ժողովի վիճիւր Տրանսկապի մասին մի փառաւոր յարկութիւն է համարվում Վրացստանի հարաբ: Պահպանողական կուսակցութիւնը վաղուց պատրաստվում էր կառավարութեան արտաքին քաղաքականութեան վրա յարձակվելու համար և դրա համար նա աւելի լաւ առիթ համարեց Վրացստանի քաղաքականութիւնը բոսնիերի հետ, որոնք լրիւ Բիխնոսֆիլիւի ժամանակ կատարելապէս հնազանդեցրած էին անգլիական իշխանութեանը և որոնք այժմ բրիտանական զօրքերի անաջողութիւններից յետոյ կատարեալ անխառնուհումաւորութիւնը բողոքովին հրաժարվել է նուաճողական քաղաքականութիւնից: Բիխնոսֆիլիւի վաղեմի մինիստրութեան անդամ պ. Գիկո սաստիկ յարձակվեցաւ այժմեան կառավարութեան արտաքին քաղաքականութեան վրա: Ակսիցան փիճարանութիւնները: Վրացստան մի ընդարձակ ձառով մանրամասնաբար մեկնեց իր բռնած ընթացքի շարժառիթները արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ առհասարակ և Տրանսկապի հարցի առիթով մտնաւ. որպէս: Այդ ձառնից յետոյ համայնքների ժողովը ձայների նշանաւոր մե-

ծառնութեամբ հաւանութիւն տուեց Վրացստանի քաղաքականութեանը: Գուրլինի մէջ կայսրական միութիւնը փողոցի վրա մի նշանաւոր ցոյց արաւ, որին մասնակցում էին մօտ 10,000 արհեստաւորներ: Այնուհետև դրանք ժողով կայացրին, որի ժամանակ խօսեցին պարլամենտի անդամներ Գիլի և Սեկստուն: Նրանք քննադատում էին իրլանդական կայսրական նոր օրէնքը և սպառնացնում էին երկրագործներին, որ նրանք պէտք է հաւասար իրաւունքներ և սեփական հողեր ունենան:

Արտասահմանի մէջ զանազան ազդու թիւնների պահպանողականները զարմաց էին յայտնում, որ անգլիական ներքին գործերի մինիստր Հարկօրտ, պահանջելով Միացեալ Նահանգների կառավարութիւնից խիստ միջոցներ գործ դնել Ֆենիկների դէմ, ինքը ոչինչ կարգադրութիւն չարաւ Լօնդոնի մէջ հաւաքված սօցիալական ժողովի դէմ: Երբ պարլամենտի մէջ մինիստրին հարց առաջարկեց այդ առիթով, նա յայտնեց հետեւեալ կարծիքը. «Եթէ յիշափոխական ժողովը նպատակը լինէր մեր երկրի մէջ կամ արտասահման որ և է յանցանք գործել, այն ժամանակ կառավարութիւնը պարտաւոր էր միջամտել, ի նկատի ունենալով, որ դատաստանական միջոցները կարող են օգտուէտ պտուղներ տալ: Բայց կառավարութիւնը իրաւունք չունէր միջամտել, որովհետեւ ժողովի մէջ միայն կարծիքներ էին յայտնվում: Արանից երևում է, որ անգլիական կառավարութիւնը չէ գործէ մնում, երբ միայն կարծիքներ են յայտնվում և միջամտում է գործին միայն այն ժամանակ, երբ որ և է յանցանք է պատրաստվում»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

- Լրագիրները հարողում են, որ Կ. Պօլսի հայ կաթօլիկների Ազգայնական կաթողիկոսը այս օրերս ներկայացաւ սուլթանին և սուլթանը չը նորոհեց նրան մեղիքի պատուանշանը:
- Ամերիկայից հեռագրում են լրագիրներին, որ Գարֆիլդ նախագահի առողջանալու համար բժշկները երաշխաւոր են:
- Անգլիայում, Գլազգօի մէջ գտան դինամիտի մեծ պահեստ: Գուրլինից գրում են որ կայսրական ջարդարները վերաբերված է րէվօլւթիօնով:
- «Голосъ» լրագրի Բերլինի թղթակիցը հարողում է որ իշխան Բիւսարկ ստացել է անյայտ անձինքներից սպառնալի անանուն նամակներ: Նրան իր ամբողջ սերունդով սպառնում են ոչնչացնել:
- Սֆիլիպց հեռագրում են, որ գեներալ Էրնրոտ կը վերադառնայ Սֆիլիպ: Այս օրերս հասաւ Բոլզարիա ինփնէր Ստրուվի բանակիցը: Համար Բոլզարիայում երկաթուղիներ շինելու նպատակով:
- «Темп» լրագրին հեռագրում են Բերլինից որ դարձեալ Եօթ սօցիալիստներ արքունիք են լայպցիղից:
- Հաստատվում է որ Միդհոլ փաշան կարող էր Բոօռօ կղզին:
- Լօնդօնի մի քանի լրագիրները հաւատացնում են որ անգլիական կառավարութիւնը հրամայել է պօլիցիային տեղեկանալ թէ ովքեր են մասնակցել Լօնդօնում նորբրուսն կայացած սօցիալիստների ժողովին և դիտարկութիւն ունի դատի ենթարկել ժողովի գլխաւոր մասնակցողներին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսում կանաչ և երեսները վերջին պատերազմի մէջ սպանված զինուորների ամեն օր անհանգստացնում էին Ֆինլանդների մինիստրին, պահանջելով իրանց խոստացված նրկական օժանդակութիւնը: Բայց տեսնելով որ բոլոր

աղաչանքները զուր էին, մի օր, երբ մինիստրը զուր էր գալիս դիւանատանից, կանաչը շրջապատեցին նրան և փայտերով սաստիկ ծեծեցին նորին գերազանցութեանը: Այդ անցքից յետոյ փողը իսկոյն տրվեցաւ նրանց: Կանաչը տեսնելով որ այդ միջոցով բաւականութիւն ստացան, դիտարկութիւն ունեն ամեն տարի Ֆինլանդների մինիստրի հետ այդ ազդու միջոցը գործ դնելու:

Վիէնայի Իօգէճչատի թատրոնում օրկէստրի կառավարելը արձակեց իր օրկէստրի բոլոր մարդկանց և նրանց տեղ ճաւիթեց երաժիշտ կանանց և օրիորդներին, որոնք երաժշտական բարձրագոյն զարգացման ժամանակ այդ երաժիշտ կանաչը միշտ հագնված են լինում սև զգեստներով, առանց որ և է զարդարանքի:

Թիֆլիսում սարսփելի կերպով բազմացել են վերջին ժամանակներ զանազան հրապարակական այդինը երգիչներով, երգչուհիներով և զինաստաններով և գեղեցիկ կանանցով: Օրկէստրի հնչիւններից ոգեւորվելով մեր զանազան դասակարգերի նոր սերունդը ամեն զիշեր անցնում է իր ժամանակը այդ տեսակ այգիներում, ուսելով, խմելով, կարողութիւնից վեր փողեր վաճակելով, մեծ մասամբ քնքոյ սևել յայտնի ներկայացուցիչների հասարակութեան մէջ: Մի որ և է առևտրական գործակատար, որ ամիսը մի 50 ռուբլ ուճել է ստանում, ծախսում է ամեն երեկոյ 10 մինչև 15 ռուբլ: Հարցնող լինի՝ որտեղից է ծարում նա այդ փողերը, որ ամիսը կանի 300 ռուբլուց աւելի, եթէ ոչ գողանալով իր տիրոջից:

Մի քանի ժամանակ սրանից առաջ մի հայուհի, Նազիկ Միսկեան անունով, եղիպտական խեղդիկ հարեմից փախել էր Նեապոլ: Չը նայելով խեղդիկ բոլոր աշխատութեանը յետ դարձնել փախուսականին, խտալիայի պօլիցիայի միջոցով, այդ նրան չարձակեցաւ: Նեապոլում հայուհին ծանօթանում է մի հարուստ երիտասարդի հետ և պատկվում է շարանիքից առաջ Նազիկը պատրաստել է տալիս հրաւիրածականներ և ուղարկում է խեղդիկ հարեմը իր բարեկամուհիներին, հրաւիրելով հարսանիք: Խեղդիկ—Խեղդիկ փաշան նամակները ստանալուն պէս ոչնչացնում է, բայց նրա հարեմի գեղեցիկուհի կողմնակի կերպով տեղեկանում են փախուսական Նազիկի նախանձելի վիճակի մասին և այն օրից Խեղդիկ փաշան ստիպված է աւելի խիստ կերպով հսկել իր հարեմի վրա:

Այժմ բոլորի ուշադրութիւնը իր վրա է դարձնում իշխանուհի Հուսէյն, Խեղդիկ փաշայի երկրորդ որդու կինը: Իշխանուհին իր բոլոր սեւածորթ ծառաներին սպիտակ զգեստ է հագցրել, նրա կառքի սև ձիաների սարքը պատրաստված է սպիտակ կաշուց արծաթեայ զարդարանքներով, իսկ կառքի ներքը պատած է սպիտակ մետաքսեայ կերպասով: Այդ կերպ զարդարած կառքի մէջ նստած և շրջապատված սևածորթ, սպիտակազգեստ ծառաներով, իշխանուհին շրջում է քաղաքի փողոցներում, ուշադրութիւն չը դարձնելով ժողովրդի զարմանքի և կրօնապաշտ մասնատանջների դժգոհութեան վրա: Իշխանուհու սկեւարացը, նախկին խեղդիկ, որ այժմ ապրում է Նեապոլում, խիստ յանդիմանել է իր հարսին հրամայելով նրան անյապաղ փոխարինել սպիտակ գոյնը մոյզ գոյնով, մնացած իշխանուհիների սովորութեան համեմատ:

«ՄՇԱԿԻ» ՀՆԵԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ
 Ա. ՊԵՏՏԵՐՈՒՐԳ, 27 յուլիսի Պետական րանիի 5% տոմսակր առաջին շրջանի արժէ 96 ռ. երկրորդ 94 ռ. 62 կ., երրորդ 94 ռ., չորրորդ 94 ռ. 37 1/2 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակր արժէ 225 ռ., երկրորդ 223 ռ. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակր արժէ 91 ռ. 75 1/2 կ., երկրորդ 92 ռ. 75 կ., երրորդ 91 ռ. 7 կ., սակի 7 ռ. 80 կ.: Բուստաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 219 մարկ, 27 պֆ.: Բորսայի քորսուրուքիւնը աւճում է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՐ ԱՐՇԲՈՒՆԻ